ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ւ Ղ Ե Ր Ձ

«21» սեպտեմբերի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ, Ստեփանավան համայնքի սիրելի քաղաքացիներ

Շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առթիվ:

Սեպտեմբերի 21-ը մեր պատմության կարևորագույն էջերից է: 34 տարի առաջ այս օրը հայ ժողովուրդը համաժողովրդական կամքով հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

Անկախությունը մեզ համար ոչ միայն պետական կարգավիճակ է, այլև պատասխանատվություն՝ մեր անցյալի, ներկայի և ապագայի առջև:

Այն կերտվեց բազմաթիվ սերունդների երազանքով և մեր ժողովրդի միասնական պայքարի արդյունքում:

Անկախության պահպանության համար պայքարում շատերը զոհաբերեցին նաև իրենց կյանքը, որոնց հիշատակի առջև խոնարհումով ենք կանգնում, և հավերժ երախտագիտությամբ հիշում նրանց նվիրումը:

Այսօր անկախությունը պարտավորեցնում է մեզ լինել միասնության, տոկունության և պատասխանատվության կրողներ՝ հանուն ուժեղ, խաղաղ և զարգացող Հայաստանի:

Թող մեր պետականությունը լինի ամուր ու հարատև, մեր ժողովուրդը՝ համախմբված, իսկ մեր հայրենիքը՝ խաղաղ սահմաններով ու լուսավոր ապագայով:

Շնորհավո՛ր տոնդ, Հայաստան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**